| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Հայաստանի փոքր թաղապետարանների ջրային ծրագիր |
| Երկիր | Հայաստան |
| Ծրագրի համարը | 40718 |
| Բիզնես ոլորտ | Ջրմուղ և կոյուղի |
| Հասարակական/Մասնավոր | Հասարակական ոլորտ |
| Խորհրդի նիստի ամսաթիվը | Մարտի 15, 2011թ. |
| Կարգավիճակ | Հայեցակարգը ուսումնասիրվել է |
| Ծրագրի ամփոփված պաստաթղթի հրապարակման ամսաթիվը | Հունվարի 14, 2011թ. |
| Ծրագրի ամփոփված պաստաթղթի թարմացման ամսաթիվը | |
| Ծրագրի նկարագիրը և նպատակները | ՎԶԵԲ-ը դիտարկում է Հայաստանին մինչև 6.5 միլիոն եվրո սուվերեն երաշխավորված վարկ տրամադրելու հարցը՝ Հայաստանի Ջրմուղ-Կոյուղի ՓԲԸ-ի հետագա վերավարկավորման համար՝ ֆինանսավորելու (i) ջրի մատակարարման բարելավումը Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում և (ii) ջրի մաքրման գործարանների և կոյուղիների կոլեկտորների վերանորոգումը Տավուշում (քաղաք Դիլիջան) և Վայոց Ձոր մարզում (քաղաք Ջերմուկ):<br><br>ԵՆԲ-ն դիտարկում է 6.5 միլիոն եվրո համաֆինանսավորման վարկ, իսկ Եվրամիության Հարևան Երկրների |

| | |
|---|---|
| | Ներդրումային Գործիք ծրագիրը (“NIF”) 7.0 միլիոն եվրո կապիտալ ծախսերի դրամաշնորհի հավանություն է տվել: |
| Անցումային շրջանի վրա ազդեցություն | Անցումային շրջանի վրա ազդեցությունը պայմանավորված է.<br><br>**(i) Ընկերության կոմերցիալիզացմամբ՝** բարելաված և խթանների վրա հիմնված պայմանագրերի միջոցով, որոնք պետք է հանգեցնեն ծախսերի ավելի լավ վերահսկմանը և ավելի բարձր, իրատեսական և իրագործելի գանձմանը<br><br>**(ii) Սպառման հիման վրա գանձմանը անցնելով՝** բարելաված ջրաչափման օգնությամբ<br><br>**(iii) Սակագների բարեփոխումներով՝** դեպի ծախսերն արտացոլող ջրի և կեղտաջրերի սակագներ՝ բոլոր սպառողական խմբերի համար |
| Հաճախորդ | Հայաստանի Ջրմուղ-Կոյուղի ՓԲԸ, պետությանը պատկանող ընկերություն, որը երկարաժամկետ կառավարման պայմանագրի ներքո ներկայումս աշխատացվում է SAUR France SA-ի կողմից: |
| ՎԶԵԲ-ի տրամադրած ֆինանսավորում | 6.5 միլիոն եվրո |
| Ծրագրի ընդհանուր գումարը | 21.2 միլիոն եվրո, ներառյալ ծրագրի հետ կապված տեխնիկական աջակցությունը |
| Բնապահպանական և սոցիալական դասակարգում, ազդեցություն և իրավիճակի մեղմացում | Բ կարգի դասակարգում (2008)<br><br>Ծրագիրը ներառում է վարկի տրամադրում բազմաթիվ վայրերում գործող ջուր մատակարարող ընկերությանը՝ մոտ 23 առանձին մարզերում ջրի և կեղտաջրի սարքավորումները ժամանակակից դարձնելու նպատակով: Ներդրումային ծրագրի բաղադրիչները հավանաբար կունենան տարածքային առանձնահատկություններ, որոնց խնդիրները հեշտությամբ կտարբերվեն |

One Exchange Square, London EC2A 2JN, United Kingdom
Tel: +44 20 7338 6000   Fax: +44 20 7338 6100   http://www.ebrd.com

| | |
|---|---|
| | և կլուծվեն մեղմացնող միջոցառումների միջոցով:<br><br>Ներկայումս անցկացվում է կորպորատիվ բնապահպանական աուդիտ, որը կենտրոնանում է կառավարման համակարգերի վրա, ինչպես նաև մարզերի ջուր մատակարարող կազմակերպությունների գործունեության և սարգավորման բնապահպանական և սոցիալական սկզբնակետային ուսումնասիրություն՝ գնահատելու նրանց ներկա գործունեության որակը ըստ համապատասխան ազգային և ԵՄ ստանդարտների և ՎԶԵԲ-ի պահանջների: Կորպորատիվ մակարդակով պատրաստվելու է բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլան, որը հիմնված է լինելու ստանդարտներին համապատասխանելու ստուգման արդյունքում արված առաջարկությունների վրա՝ պահանջվող բարելավումները իրականացնելու նպատակով:<br><br>Սույն ծրագրի ամփոփված փաստաթուղթը կթարմացվի, երբ բնապահպանական և սոցիալական ստանդարտներին համապատասխանելու ստուգումների արդյունքները դառնան ակնառու և արտացոլեն եզրահանգումները: |
| Տեխնիկական աջակցություն | Ստորագրմանը նախորդող փուլ.<br><br>• *Տեխնիկական զննություն* - ներառում է տեխնիկական, ֆինանսական, բնապահպանական և սոցիալական ստանդարտներին համապատասխանելու ստուգումը և նպատակ ունի աջակցել բանկին առաջարկվող ծրագիրը գնահատելու հարցում: (Կանադայի կառավարության կողմից տրամադրվում է 0.2 մլն եվրո)<br><br>Ստորագրմանը հաջորդող փուլ.<br><br>• *Ծրագիրն Իրականացնողին տրամադրվող աջակցություն՝ ինժեներական* |

| | |
|---|---|
| | Աջակցություն Հայաստանի Ջրմուղ-Կոյուղի Ընկերությանը՝ ինժեներական ծրագրերի, տենդերի գնահատման, պայմանագրերի շնորհման և ադմինիստրացման, ֆինանսական վերահսկողության, ծրագրային կառավարման և հաշվետվության ծառայությունների ոլորտում: (1.0 մլն եվրո տրամադրվելու է Հարևան Երկրների Ներդրումային Ծրագրի Տեխնիկական Աջակցության դրամաշնորհի և միջազգային դոնորի կողմից)<br><br>Տեխնիկական աջակցության ֆոնդի կողմից ֆինանսավորված ծրագրերի խորհրդատվական աջակցության համար այցելեք procurement of consultants. |
| Գնումներին կամ տենդերին մասնակցելու հնարավորություն | Այցելեք. EBRD Procurement<br>Տեղեկատվություն. Հեռ.՝ +44 20 7338 6794;<br>Ֆաքս՝ +44 20 7338 7472<br>Էլ.փոստ՝ procurement@ebrd.com |
| Ընդհանուր տեղեկատվություն | ՎԶԵԲ-ի ծրագրերի մասին տեղեկատվություն, որն առնչություն չունի գնումների հետ:<br>Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380<br>Էլ.փոստ՝ projectenquiries@ebrd.com |
| Հանրային տեղեկատվական քաղաքականություն (PIP) | Հանրային տեղեկատվական քաղաքականությունը ի ցույց է դնում, թե ինչպես է ՎԶԵԲ-ը ներկայացնում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկումը:<br><br>Հանրային տեղեկատվական քաղաքականության տեքստին ծանոթանալու համար այցելեք http://www.ebrd.com/about/policies/pip/index.htm |
| Ծրագրերի վերաբերյալ Բողոքարկման Մեխանիզմ | ՎԶԵԲ-ը հիմնել է Ծրագրերի վերաբերյալ Բողոքարկման Մեխանիզմը (PCM), որպեսզի |

| | |
|---|---|
| (PCM) | այն Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր վնասակարության մասին անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ ուսումնասիրություն անցկացնի: ԲՄ-ին վերաբերող գործընթացի օրենքներին կարող եք ծանոթանալ http://www.ebrd.com/about/integrity/irm/about/pcm.pdf կայքում: Ռուսերեն տարբերակի համար այցելեք http://www.ebrd.com/about/integrity/irm/about/PCMRulesRussian.pdf<br><br>ԲՄ-ի ներքո բողոքները պետք է ներկայացվեն ՎԶԵԲ-ի ֆինանսավորման վերջին տրանշից ոչ ուշ քան 12 ամսվա ընթացքում: Կարող եք կապվել ԲՄ-ի գործակալի ( pcm@ebrd.com) կամ ՎԶԵԲ-ի համապատասխան գրասենյակի հետ, եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում պետք է ներկայացնեք բողոքը: |